Արձանագրություն N 7
ՀՀՊԵԿ-ՀԲՄԽԾՁԲ-24/3 ծածկագրով հրատապ բաց մրցույթի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

01 նոյեմբերի 2024թ.
ժամը 15:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Լ. Նալբանդյանը
անդամներ՝ Գ. Գալստյանը, Լ. Ալավերդյանը, Ա. Ավետիսյանը, Մ. Պատուրյանը
քարտուղար՝ Ա. Ասատրյանը

I. Հայտերի գնահատման մասին

(Լ. Նալբանդյան)

1. Ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը արձանագրեց, որ ներկայացված հայտերը չեն համապատասխանում ՀՀՊԵԿ-ՀԲՄԽԾՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

ա) «Դանիամ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում Հավելված 1.1-ը լրացված է որոշակի թերություններով՝
օրինակ.

Անժելա Խաչատրյանը համաձայն տեղեկանքի աշխատել է «Դանիամ» ՍՊԸ-ում 2023թ. հունվարի 3-ից, սակայն տեղեկանքում նշվում է 2024թ. հունվարի 3-ից,

Արամ Սոխակյանը Դանիամ ՍՊԸ-ում աշխատել է մինչև 23.05.2024թ., սակայն Հավելված 1.1-ում նշված է առ այսօր:

Կարեն Կիրակոսյանը 2019-2013 թվականը աշխատել է «ՊիկսԱրտ» ՍՊԸ-ում, սակայն ներկայացված տեղեկատվությունը ներառված չէ Հավելված 1. 1-ում, մինչդեռ ներկայացված է 2012-2019թթ. աշխատանքային փորձ, որի մասին տեղեկանք կամ հիմնավորում առկա չէ:

Պողոսյան Գոռի աշխատանքային ստաժը ընդհատումներով է, սակայն Հավելված 1.1-ում նշված է 1997-առ այսօր:

Դանիել Զագոնսկիի տեղեկանքը տրված է 01.08.2022թ.-ին, սակայն Հավելված 1.1 նշված է, որ նա առ այսօր աշխատում է «Էներգո» ՍՊԸ-ում:

Արզումանյան Գրիգորիի մասին Անհատական հաշվի քաղվածքը է տրամադրված 2023թ-ին, ուստի այդ տեղեկատվությունը չի համապատասխանում Հավելված 1.1-ով ներկայացված տեղեկատվությանը:

Մաթևոսյան Էմիլի «Դանիամ» ՍՊԸ-ում ունեցած աշխատանքային փորձը ներառված չէ Հավելված 1.1-ում:

Տաթևիկ Ալեքսանյանի փաստաթղթերը առկա են, սակայն վերջինս ներառված չէ Հավելված 1.1-ում:

Ներկայացված մասնագետների աշխատանքային փորձը չի դիտարկվելու, եթե այն հստակ չի վերաբերում պահանջվող մասնագիտական փորձառությանը:

Մարտիրոսյան Կարենի մասնագիտական փորձառությունը որպես նախագծի ղեկավար 7 տարուց պակաս է և 2-ից ավել թեկնածու տվյալ հատիքի համար չի դիտարկվելու, հետևաբար՝ Մարտիրոսյան Կարենի թեկնածությունը չի դիտարկվում:

բ) «Դանիամ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 08-23, ԿԿ-ԷԱՃԾՁԲ-23/08. 4 և ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/4-1 պայմանագրերում հանձման-ընդունման արձանագրությունները ամբողջությամբ կամ մասամբ ներկայացված չեն (պայմանագրերի շտկումները չներկայացնելը չի դիտարկվելու որպես պարտավորությունների չկատարում, պարզապես ներկայացված վերոնշյալ պայմանագրերը չեն դիտարկվելու՝ գնահատվելու):

գ) «ԼուիՍոֆտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Դիմում-հայտարարության 2 մասը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևին, Կազմակերպության կողմից ներկայացված չեն «Աշխատանքային ռեսուրսներ» և «Մասնագիտական փորձառություն» չափանիշների մասով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

(Լ. Նալբանդյան)

2. Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Դանիամ» ՍՊԸ-ին և «ԼուիՍոֆտ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Նալբանդյան

անդամներ՝ Գ. Գալստյան

Լ. Ալավերդյան

Ա. Ավետիսյան

Ս. Պատուրյան

քարտուղար՝ Ա. Ասատրյան